ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Ո Ր Ո Շ Ու Մ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1204-Ա «01» ապրիլի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի Հ.2554-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 30.08.2024թ. տրված h.Կ-30082024-01-1024 որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.05.2020թ. h.25072024-01-0394 վկայականը, ինչպես նաև հաշվի առնելով քաղաքացի Ստեփան Սապոնջյանի 30.07.2024թ. h.Դ-97042-24 և 02.09.2024թ. h.Դ-111599-24 դիմումները.

1. Երևանի քաղաքապետի 2024 թվականի հուլիսի 12-ի «Երևան, Նորք-Մարաշ, Նորքի 4-րդ փողոց h.15/1 հասցեում՝ սեփականության իրավունքով քաղաքացի Ստեփան Վարդանի Սապոնջյանին պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցն օրինականացնելու մասին» h.2554-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետում «ինքնակամ բացված պատուհանը 1 (մեկ) հատ և ինքնակամ բացված դռները 2 (երկու) հատ» բառերը փոխարինել «ինքնակամ բացված պատուհանը 1 (մեկ) հատ, ինքնակամ բացված դռները 3 (երեք) հատ և ինքնակամ բացվածքը 1 (մեկ) հատ» բառերով.

2) 3-րդ կետի 1-ին ենթակետում «166301 (մեկ հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր մեկ)» բառերը փոխարինել «173843 (մեկ հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր քառասուներեք)» բառերով:

2. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձը, սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարի Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված գումարների տարբերությունը՝ 7542 (յոթ հազար հինգ հարյուր քառասուներկու) դրամ:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ